Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործավարություն

2012 թ. –ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 31 դիմումներ և առաջարկություններ , որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները : Համայնքի բնակիչներին տրամադրվել են 676 հատ տեղեկանքներ, բնութագրեր : Հղվել են 138 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայքնի ղեկավարի կողմից ընդունվել է 42 որոշում :Արձակվել է 11 կարգադրություն :

2. Ավագանու գործունեություն

2012 թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի ավագնին գումարել է 4 արտահերթ և 3 հերթական նիստ : Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2012 թվականի բյուջեում: Հաստատվել է համայնքի 2013 թվականի բյուջեն, հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2013 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: Ընդունվել է համայնքի ավագանու կանոնակարգը : Ավագանու քննարկմանն են ներկայացվել 47 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3.Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

Խաղողի այգի -5.1 հա

Պտղատու այգի -14.8հա

2012 թվականին կատարվել է 264.28 հա հացահատիկի, լոբու 39.28հա, կարտոֆիլի 7հա, բոստանային կուլտուրաների 55 հա, վարունգի 37 հա, լոլիկի 35 հա, սեղանի ճակնդեղ 1 հա , և այլ բանջարեղենի 90 հա ցանքեր : 2012 թվականին կատարվել են նաև երկրորդ բերքի համար 15.5 վարունգի 3.3 հա, լոբու 2.2 հա, 10 հա կանաչու ցանքեր:

Անասնագլխաքանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 310 գլուխ, որից՝ կովեր 126 գլուխ

Մանր եղջերավոր անասուններ 35 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 14

136 գլուխ խոզեր,որից մայրեր՝30

Մեղվաընտանիք -8, թռչուն -2311

4. Հողի հարկ և գույքահարկ.

2012 թվականին համայնքային բյուջեով նախատեսվել է 4221.8 հազար դրամ հողի հարկ: 01.01.2013 թ.-ի դրությամբ համայնքի հողօկտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 4312.3 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 102.1%-ը :
Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 5762.9 հազար դրամ: 01.01.2013 թվականի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 3591.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 62.3% -ը :2012 թվականի բյուջեով նախատեսվել է 105.3 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ : 01.01.2013 թվականի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 465.1 հազար դրամ, որը կազմում է տարեկան 64.5%: 2012 թվականի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 36433.4 հազար դրամ , որը ֆինանսավորվել է 100 % - ով : 2012 թվականի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել են 11177.4 հազար դրամ, 01.01.2013 թ. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 8858.4 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 79.3 %-ով:

Ծախսեր

Ջրառատի գյուղապետարանը 01.07.2012թ.-ից մինչև 01.01.2013.թվականը կատարել է հետևյալ ծախսերը:
1. վճարել է ընթացիկ աշխատավարձ 6960.2 հազար դրամ
2. փոխանցվել է սոց. վճար -1566.0 հազար դրամ
3. կատարել է թերթի բաժանորդագրության ծախս - 48.8 հազար դրամ
4. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է -433.4 հազար դրամ
5. համակարգչային ծառայության համար փոխանցվել է -66.8 հազար դրամ
6. փոխանցվել է էլեկտրոէներգիայի գումար - 1222.3 հազար դրամ
7. փոխանցվել է գազի օկտագործման գումար - 58.8 հազար դրամ
8.միջոցառումների համար՝ բերքի տոնի և ամանորի համար, կատարվել է 550.0 հազար դրամ
9. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդյա - 10685.5 հազար դրամ
10. գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է -300 հազար դրամ
11. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն -1975.0 հազար դրամ
12. խորքային պոմպի վերանորոգման համար ծախսվել է 670.0 հազար դրամ

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3004 մարդ:
2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 16 երեխա, գրանցվել է 9 մահ:
Ընտանեկան նպաստ ստացողներ 45 ընտանիք

Համայնքում թոշակառուները 318 հոգի են:

5, Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 372 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 50 երեխայով և 9 աշխատողով :

6 Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի տուն 3 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 21 երխաներով և սպորտի խմբակներ բոնցկամարտի, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

7 Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատողով:

8 Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2012 թ-ի աշնանային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հ. Հ. պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության անկախության օրը:

Պարբերաբար իրականցվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարում:

10 . Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 10.000.000 ՀՀ դրամ

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհորների հորատման և էլեկտրաֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 25.000.000 Հ. Հ. դրամ:

Ջրառատի գյուղապետ՝ Ս. Գալստյան